

Տ Ա Թ Ե Վ Գ Ի Տ Ա Կ Բ Թ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ի Բ

«Մանկավարժական միտք» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ. նիստի որոշման (արձ. № 25)՝ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների համար

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ

ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ  
PEDAGOGICAL THOUGHT

2016  
1–2 (60–61)



ՀԱՆԴԵՍԻ ՀԻՄՆԱԴԻՐՆ Է  
«ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ»

**«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ**

<b>ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈԿՐԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԶԻԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱՀՐԱՄ</b>	«Տաթև ԳԿՀ»-ի հիմնադիր և գլխավոր տնօրեն Հանդեսի գլխավոր խմբագիր Խմբագրի տեղակալ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի նեկտոր
<b>ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ ԶՈՒԼԻԵՏԱ</b>	ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
<b>ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՆ</b>	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկա- վարժական ինստիտուտի նեկտոր
<b>ՂՈՒԿԱՍՅԱՆ ՆՈՐԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ</b>	ՀՀ կրթության ազգային ինստիտուտի տնօրեն Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
<b>ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԼԵՄՍ</b>	Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր
<b>ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐԱՄ</b>	Երևանի պետական համալսարանի նեկտոր, ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

<b>ԱԶԱՐՅԱՆ ՌՈՔԵՐՏ</b>	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
<b>ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ</b>	Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետի դեկան, բան. գիտ. թեկնածու
<b>ԱԼԻԽԱՆՅԱՆ ԱՇՈՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ</b>	Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տնօրեն Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
<b>ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ</b>	Երևանի պետական համալսարանի ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ամբիոնի վարիչ, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
<b>ՄԱՐԴՈՅԱՆ ՌՈՒԶԱՆԵԱ</b>	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավար- ժական ինստիտուտի մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկ. գիտ. դոկտոր, դոցենտ
<b>ՍԱՀԱԿՅԱՆ ԼԻԴԱ</b>	Երևանի պետական բժշկական համալսարանի քիմիայի ամ- բիոնի վարիչ, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
<b>ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՔԵՐՏ</b>	«Քվանտ» վարժարանի տնօրեն

THE FOUNDER OF THE JOURNAL "PEDAGOGICAL HOUGHT" IS  
"TATEV SCIENTIFIC EDUCATIONAL COMPLEX

**EDITORIAL BOARD OF THE JOURNAL "PEDAGOGICAL THOUGHT"**

<b>MKRTCHYAN SOKRAT</b>	Founder and president of the "Tatev Scientific educational complex"
<b>HARUTYUNYAN NAZIK</b>	Editor-in-chief
<b>ABRAHAMYAN ARAM</b>	Deputy editor
<b>ARAKELYAN VAHRAM</b>	Rector of Yerevan State Institute of Physical Training
<b>ARZUMANYAN LILIT</b>	President of HQB, RA
<b>GYULAMIRYAN JULIETA</b>	Professor of State Armenian Pedagogical University
<b>GRIGORYAN VARDEVAN</b>	Rector of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan
<b>GHUKASYAN NORIK</b>	Head of the National Institute of Education, RA
<b>MANUKYAN MNATSAKAN</b>	Professor of Armenian State Pedagogical University
<b>MANUKYAN SERGEY</b>	Doctor of Pedagogical Sciences
<b>NERSISYAN LEMS</b>	Doctor, Professor of State Armenian Pedagogical University
<b>SIMONYAN ARAM</b>	Rector of Yerevan State University, academician of National Academy of Sciences

**EDITORIAL COUNCIL**

<b>AZARYAN ROBERT</b>	Head of Special Education Department, Doctor, Professor of Pedagogical Sciences
<b>MIKAYELYAN TIGRAN</b>	Dean of the Faculty of Foreign Languages, ASPU, Ph.D.
<b>ALIKHANYAN ASHOT</b>	Director of College after A. Shirakatsi
<b>GEVORGYAN PARGEV</b>	Head of Education Department, Chair of the pedagogy Vanadzor State Pedagogical Institute, Doctor, Professor
<b>KARAPETYAN KARAPET</b>	Head of the department of Romance and Germanic faculty, Yerevan State University
<b>MARDOYAN RUSANNA</b>	Head of the pedagogical faculty of Gyumri State Pedagogical Institute after M. Nalbandyan
<b>SAHAKYAN LIDA</b>	Head of chemistry department, Yerevan State Medical University, Doctor, Professor
<b>VARDANYAN ROBERT</b>	Director of college "Quant"

УЧРЕДИТЕЛЬ ЖУРНАЛА  
"НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС ТАТЕВ"

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

<b>МКРТЧЯН СОКРАТ</b>	Учредитель и генеральный директор "Научно-образовательного комплекса Татев"
<b>АРУТЮНЯН НАЗИК</b>	Главный редактор журнала
<b>АБРААМЯН АРАМ</b>	Заместитель редактора
<b>АРАКЕЛЯН ВАГРАМ</b>	Ректор Армянского государственного института физической культуры
<b>АРЗУМАНЯН ЛИЛИТ</b>	Председатель ВАК РА
<b>ГРИГОРЯН ВАРДЕВАН</b>	Ректор Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна
<b>ГУКАСЯН НОРИК</b>	Директор Национального института образования РА
<b>ГЮЛАМИРЯН ДЖУЛЬЕТТА</b>	Доктор, профессор Армянского государственного педагогического университета
<b>МАНУКЯН МНАЦАКАН</b>	Профессор Армянского государственного педагогического университета
<b>МАНУКЯН СЕРГЕЙ</b>	Доктор педагогических наук, профессор
<b>НЕРСИСЯН ЛЕМС</b>	Профессор Армянского государственного педагогического университета
<b>СИМОНЯН АРАМ</b>	Ректор Ереванского государственного университета, член-кор. Академии наук РА

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

<b>АЗАРЯН РОБЕРТ</b>	Зав. кафедрой специальной педагогики, Доктор педагогических наук, профессор
<b>АЛИХАНЯН АШОТ</b>	Директор Армянского национального лицея им. Анания Ширакаци
<b>МИКАЕЛЯН ТИГРАН</b>	Декан факультета иностранных языков АГПУ, к. ф. н
<b>ВАРДАНЯН РОБЕРТ</b>	Директор гимназии "Квант"
<b>ГЕВОРГЯН ПАРГЕВ</b>	Заведующий кафедрой педагогики Ванадзорского государственного педагогического института им. О. Туманяна, доктор, профессор
<b>КАРАПЕТЯН КАРАПЕТ</b>	Заведующий кафедрой романогерманского факультета Ереванского государственного университета, к. п. н. доцент
<b>МАРДОЯН РУЗАННА</b>	Декан педагогического факультета Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна, д. п. н., доцент
<b>СААКЯН ЛИДА</b>	Заведующий кафедрой химии Ереванского государственного медицинского университета им. М. Гераци, д. п. н., профессор

# ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ

*Մարդ արարածը վերջնապես կենսագործված իրականությունն է:*

*Ամեն մարդ է, ոչ միայն ինչ որ է այսօր, այլ նաև է այն, ինչ որ կարող է լինել վաղը՝ լավ կամ վատ:*

### **Վազգեն Ա**

Անձի սոցիալականացմանը վերաբերող հարցադրումները դեռևս երիտասարդության տարիներից եղել են Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի (աշխարհիկ անունը՝ Կարապետ Պալճյան) հետաքրքրությունների տիրույթում: Մեծ մանկավարժ-կաթողիկոսին դեռևս երիտասարդ տարիներին հաջողվել է անձնավորության ձևավորման վրա իրենց ազդեցությունն ունեցող գործոնների՝ ժառանգականության, միջավայրի և դաստիարակության քննական վերլուծություն կատարել 1938-ին «Անձնավորության գաղափարի մասին. մտածումներ» աշխատության մեջ (2, 33-50):

Իր աշխատության մեջ ապագա կաթողիկոսը՝ երիտասարդ տարիներին Ռումինիայի ազգային վարժարանի ուսուցիչ Կարապետ Պալճյանը, գրում է, որ մարդուն ծնողներից փոխանցված կենսաբանական, նույնիսկ հոգեբանական ժառանգականությունը հնարավոր չէ փոփոխել, դրանք կյանքի ձև դարձած

իրականություններ են, որոնք պետք է հաշվի առնել ուսուցման գործընթացը կազմակերպելիս. «Մարդը ինքն իր մեջ բավարար ու կատարյալ էակ մը չէ: Մարդը միակ կենդանին է, որ իր անկատարելության խոր զգացումը ունի, այդ պատճառով կը ձգտի դեպի կատարելություն, դեպի գեթ հարաբերական, ինքնաբավարարում: Ահա ատոր համար է, որ մարդը միշտ անկայուն է ինքն իր մեջ: Ան իրմե դուրս սկզբունք մը կը փնտռե, որուն կառչի ու ինքզինքը ամբողջացնե, ինքզինքը անկատար զգալու գիտակցութենեն ազատի այսպեսով փրկվի» (9, 21):

Ներքին՝ ժառանգական գործոնի կողքին նա դնում է դաստիարակությունը՝ որպես անձի ձևավորման և զարգացման վրա ազդող արտաքին գործոն. «Ձեր երեխաներուն հոգիներուն մեջ ինչ որ սերմանեք, այն կհնձեք վերջը: Բարոյական նկարագիրը թանկագին մարգարիտ մըն է, որ լուսաշող ադամանդի նման կփայլի, ուր որ ալ գտնվի՝ համեստ հյուղակի կամ ապարանքի մեջ. ան կլուսավորե, կկառուցե, բարիք կտարածե շուրջը» (7, 284):

Վեհափառը մերժում է Ջոն Լոկի միտքը, թե երեխայի հոգին մաքուր տախտակ է՝ tabularasa: Հայ մանկա-

վարժական մտքի պատմության մեջ դեռևս 14-րդ դարում են առաջ քաշվել դաստիարակության ազդեցիկ ուժի մասին տեսությունները, ըստ որոնց՝ մարդու միտքը համեմատվել է «լվացված մազաղաթի» (Գր. Տաթևացի), երբեմն՝ նույնիսկ «մաքուր հայելիի» (Հովնան Որոտնեցի) հետ (1, 192): Միջնադարյան մտածողները համարել են, որ դրանց վրա կարելի է գրել անձնավորության դաստիարակության բովանդակությունը: Հակադրվելով այս տեսակետներին՝ Վեհափառը գրում է. «Մեր զգայարանները և առավել ևս մեր գիտակցությունը նման չեն հայելիների և ոչ էլ ֆոտոապարատների, որոնք պարզապես արտացոլեին արտաքին աշխարհը գրգիռների միջոցով: Դա տեղի է ունենում մեր գիտակցության և զգայարանների յուրահատուկ գործունեությամբ» (8, 44–45):

Կ. Պալճյանը համոզված է, որ մարդը ծնվում է ժառանգական որոշակի նախադրյալներով, որոնք համապատասխան դաստիարակության և միջավայրի գործոնների ազդեցության միջոցով կարող են ստանալ կամ չստանալ դրսևորումներ: Անդրադառնալով խնդրին՝ նա ձևակերպում է իր մոտեցումը. «Դժբախտ է այն մարդը, որի ճակատին ոչինչ չի գրված, և որի վրա ամեն ինչ կարելի է գրել, մի օր՝ մի բան, ուրիշ օր՝ այլ բան» (7, 295):

Դաստիարակության և ժառանգականության փոխհարաբերությունների հարցը նրա կարծիքով բնական է, և յուրաքանչյուրի գործառույթը հավասարաչափ կարևոր է անձնավորության ձևավորման և զարգացման ընթացքում: Նա գտնում է, որ երեխաներն ի սկզբանե կարող են ունենալ «ապագա թերություններու կորիզներ», որոնք թեև գալիս են

ժառանգաբար, սակայն դաստիարակության հզոր ուժի ազդեցության տակ հնարավոր է դրսևորումներ չստանան: Հատկապես ժառանգական նախադրյալների հարցում համաձայնելով Ջ. Դյուիի տեսակետի հետ, թե կյանքի ընթացքում գենետիկ նոր նախադրյալներ ձեռք բերել, ավելացնել հնարավոր չէ, դրանք բնատուր են, Կ. Պալճյանը նկատում է, որ եղած նախադրյալների գոյությունը դեռ չի նշանակում դրանց դրսևորում: Հանրային կյանքի առաջ քաշած բարձր նպատակները, բարի գաղափարներով ոգեշնչված միջավայրը մարդու գիտակցության համար կարող են փրկություն լինել: Այսպիսի խթանների շնորհիվ է, որ մարդը սկսում է ճանաչել ինքնիրեն: Դիտարկելով անձնավորության սոցիալականացման փուլերից թերևս բարձրագույնը՝ անհատականության ձևավորումը, նա իր եզրույթն է առաջարկում՝ «մեծ անձնավորություն», որն իր ժամանակի իդեալն է լինելու՝ ինչ-որ իմաստով բացարձակացնելով մարդու մեջ մարդկայինը՝ նիցշեական տեսանկյունից մոտենալով հարցին: «Մեծ անձնավորության» ձևավորման և զարգացման գործում նա հատկապես կարևոր է համարել կեղծ և ճշմարիտ իդեալների տարբերակումը՝ հարցը մեկնաբանելով ժառանգականության, միջավայրի ու դաստիարակության ազդեցությունների տեսանկյունից: 1957 թ. Մայր Տաճարում արտասանած քարոզներից մեկի ժամանակ Վազգեն Վեհափառը դիմում է ներկաներին. «Մեծ մարդիկ, մեծ անձնավորությունները պատրաստ չեն ծնիր: Ճիշտ է, որ հնարավորություններով կծնին անոնք, բայց մանավանդ անոնք արդյունքը կըլլան իրենց ժամանակին և իրենց կյան-

քի պայմաններուն, միջավայրին: Մեծ անձնավորություն մը ուրիշ բան չէ, եթե ոչ կորովի մեկ պատասխանը՝ տրված ժամանակի պայմաններուն, իրադարձութեանց և մանավանդ ժողովրդի պահանջներուն՝ բարոյական, հոգևոր իդեալի մը շուրջ կազմակերպված» (6, 257-258): Վեհափառի ձևակերպումը ցույց է տալիս անձի ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնների շղթան՝ հանգամանքներ, պայմաններ, բնական և սոցիալական իրողություններ, որոնք խթանում են անձին և մղում գործունեության: Դրան զուգահեռ Վազգեն Առաջինը հստակ դիտարկում է անում՝ նկատելով, որ շատ հաճախ իմացական կարողության տեր մարդիկ, ունենալով «մեծ անձնավորություններ» դառնալու բոլոր անհատական տվյալները, այնուամենայնիվ, հաջողությունների չեն հասնում, ավելին՝ սայթաքում և նույնիսկ ձախողում են, որովհետև չեն կարողանում «ճշմարիտ իդեալը ընտրել» (6, 257-258):

Նա գտնում է, որ լավն ու վատը նստած են յուրաքանչյուրիս մեջ, դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը անձի հոգեբանական ապրումների, խիզախումների, բազմակողմանի դաստիարակության և ազատ ընտրանքի արդյունք է. «Մարդկային բնույթը ունի հսկայական ամպլիտուդ: Մարդը կարող է վեր բարձրանալ և ցած ընկնել: Գրական ստեղծագործություններում դա հստակ երևում է: Մարդը կոնտրաստային է, փոփոխվող: Հարկավոր է հոգևոր ուժ, որպեսզի հնարավոր լինի հավասարակշռել մարդու բնույթը» (10, 20):

Մարդու համար իդեալի որոնման ճանապարհին երիտասարդ տարիքում նա բացարձակեցնում է մարդու և Աստծո

կերպարները՝ խիզախորեն նմանեցնելով նրանց իրար՝ երկուսի դրսևորած ազատ և ստեղծագործ վարքագծի տեսանկյունից. «Քրիստոնեայ Աստուածը անձնաւորութիւն մըն է, նոյնպէս և անոր ստեղծած մարդը: Մարդ ևս անձնավորութիւն է, որովհետև ազատ և ստեղծագործող անհատականութիւն մըն է» (4, 4): Նա բացարձակ կատարելություն է համարում Հիսուսի կերպարը և փաստում է, որ մարդը հոգեբանական տեսանկյունից զիջում է զարգացման այն մակարդակին, որին հասել են նրա իմացական ուժերը: Մարդը կարիք ունի եսակենտրոն մտածողությունից գնալ դեպի վեհը, գեղեցիկը, անանձնական բարիք ստեղծելուն. «Մարդու լուսաւորուած իմացականութեանը պէտք է տալ նաև լուսաւորուած սիրտ» (5, գործ 324): Համեմատելով հեղաշրջում սիրող, բայց պահպանողական բնության իրարամերժ հատկությունները՝ նա գտնում է, որ մարդն իր գիտակցության շնորհիվ տարբերվում է կենդանիներից. «գիտակցության միջոցով մարդը կզգա և կհասկանա ինչ որ իրմէ դուրս է, մինչդեռ կենդանին բնագործ կզգա՝ առանց հասկանալու» (3, 14):

Մարդու փառքը և ողբերգությունը Վազգեն Առաջինի մեկնաբանությամբ ոչ թե միայն ժառանգականության, միջավայրի, դաստիարակության գործոններից է կախված կամ պայմանավորված է կենդանի կամ Աստված լինելու հանգամանքով, այլև այն ուղղակի պատասխանն է մարդու բարձր գիտակցականության, ազատ ընտրանքի, որոշման, որ թաքնված է կենսաբանական, բանական և հոգեբանական մակարդակներից կազմված նրա համակարգի խորքերում:

## Գրականություն

1. Գարրիեյան Հ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 2, Եր., 1965:
2. Գաղութահայ տարեգիրք, Ա տարի, 1939:
3. Հերկ, Ա տարի, թ. 9, փետրուար, Պուքրէշ, 1938:
4. Հերկ, Ա տարի, թ. 11, ապրիլ, Պուքրէշ, 1938:
5. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, գործ 324:
6. Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կոնդակներ, քարոզներ, ճառեր, Գիրք 1, Ս. Էջմիածին, 1957:
7. Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կոնդակներ, քարոզներ, ճառեր, ելույթներ, Գիրք երրորդ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1976:
8. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետ, հոգեբանության դասեր, Ս. Էջմիածին, 1961:
9. Վազգեն Ա կաթողիկոս, Գալիքի տեսիլքով. ուսումնասիրություններ, հոդվածներ, ուղեգրություններ (1933–1954), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1988:
10. Благомира–в людском единении, Верьовный патриарьи католикос всех армян Васкен I, лит. Пед. М. Н. Кондратьев, Эчмиадзинский католикосат, 1988.

### FACTORS INFLUENCING THE FORMATION OF A PERSON: INTERPRETATIONS BY AZGEN I CATHOLICOS–PEDAGOGUE

*L. HAYRAPETYAN*

The article presents the interpretations by Vazgen I Catholicos–Pedagogue, which address to the factors such as: heredity, environment, education (upbringing), influencing the formation of a person.

### ФАКТОРОВ ВЛИЯЮЩИХ НА ФОРМИРОВАНИЕ ЛИЧНОСТИ ВО ВЗГЛЯДАХ КАТОЛИКОСА–ПЕДАГОГА ВАЗГЕНА ПЕРВОГО

*Л. АЙРАПЕТЯН*

В статье рассмотрены факторов влияющих на формирование личности, к которым относятся наследственность, среда и воспитание, представленные католикосом Всех Армян Вазгеном Первым.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

#### ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱԻԴԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

*ՀՀ կրթության համակարգը. նպատակը, խնդիրները . . . . . 5*

#### ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

#### ФРУНЗ КАЗАРЯН, ГРИГОРИЙ ГРИГОРЯН

*Левшество и физическое воспитание. . . . . 14*

#### ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

*Տարբեր ժամանակներում միևնույն ստեղծագործության կարդալը որպես ընթերցողական կարողության զարգացման գործոն . . . . . 20*

#### ՌՈՒԲԻԿ ԷԼՈՅԱՆ

*Հայ ազգային-ազատագրական պայքարի Բաֆֆու գաղափարաբանության ուսուցման մի քանի հարցեր . . . . . 26*

#### ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Հնչույթաբանական վերլուծության հիմնական ընթացակարգերը . . . . . 31*

#### МЕРИ АВЕТИСЯН

*Особенности управления системы высшего образования РА . . . . . 41*

#### ԳԵՎՈՐԳ ՖՐՂՈՅԱՆ

*Փիլիսոփայության ուսումնասիրության անհրաժեշտությունը ավագ դպրոցում . . . 46*

#### ԼՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Սոցիալ-մշակութային միջավայրի դերը դաստիարակության գործընթացում . . . 50*

#### ԼԻԼԻԱ ՎԵՐԴՅԱՆ

*Բուհի կրթական միջավայր ուսանողների ինտեգրման գործընթացում կուրսատորի դերի և գործառույթների գիտամեթոդական հիմնավորումը . . . . . 54*

**ՆԱՐԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ**

*Մաթեմատիկական տերմինների ուսուցումը անգլերենով և ռուսերենով  
ավագ դպրոցի ավարտական դասարաններում . . . . . 58*

**ԳՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Ֆիզիկական կուլտուրան՝ համամարդկային կուլտուրայի օրգանական մաս. . . . . 62*

**ԱՆՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ**

*Կրթությունը դպրոցականի ինքնազնահատականի ձևավորման մեր փորձը . . . . . 69*

**ԱԼՎԱՐԴ ԱՅՎԱԶՅԱՆ**

*Մանկավարժական հաղորդակցման գործընթացի բովանդակությունը և  
արդյունավետության պայմանները. . . . . 74*

**ԱՐՓԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*Միջառարկայական կապեր.  
հասարակագիտություն–մաթեմատիկա–բնագիտություն . . . . . 79*

**ԱՍՏԴԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Դիսկրքսիայի առաջացման պատճառները և կանխարգելման ուղիները. . . . . 89*

**ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

*Եվրոպական լեզվական թղթապանակի ներդրումն ու կիրառումը  
ապագա մանկավարժի պրակտիկայում . . . . . 94*

**HASMIK GALSTIAN**

*Quelques Remarques Sur L' Apprentissage Des Langues Vivantes. . . . . 99*

**ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ**

*Անգլերեն բժշկական մեդիաստությունների ուսուցման ռազմավարությունները. . . 104*

**ՆԱՐԵԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

*Գեղանկարչական սրտեղծագործությունների ընկալման գործընթացի  
կազմակերպման առանձնահատկությունները փարրական դպրոցում . . . . . 110*

**ՄԱՐԻԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Երգչական հենարան և նրա կիրառումը երգարվեստում . . . . . 115*

**ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Դարձվածքների ուսուցումը . . . . . 120*

**ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

*«Ընփանիքի կինեդիկ պատկերը» և «Անավարտ նախադասություններ»  
մեթոդիկաները որպես ընփանիքում միջանձնային  
հարաբերությունների փոխորոշման միջոց . . . . . 126*

**ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, ՄԱՐԻԱՄ ԱՍԵԼԵՍՅԱՆ, ՆՈՒՆՈՒՖԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Կրտսեր և միջին դպրոցականների հարմարումն ուսումնական  
բեռնվածությանը . . . . . 134*

**ՍՈՒՍԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

*Բառի ոճական արժեքի ուսումնասիրության մեթոդները . . . . . 141*

**ԼԻԼԻԹ ՖԼՋՅԱՆ**

*Դպրոցականների գեղարվեստական կարողությունների և  
ստեղծագործական ընդունակությունների փոխադարձ կապը . . . . . 146*

**ԱՂԱՎՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Ինֆորմացիայի կողավորումը համակարգչում . . . . . 151*

**АННА КИРАКОСЯН**

*Инновационный подход в музыкальной педагогике . . . . . 157*

**ХАЧАТУР ЮЗБАШЯН**

*Формирование личности средствами армянской национальной борьбы  
«Кох» и педагогическое мастерство тренера . . . . . 162*

**KARINÉ CHAHBAZYAN, GOHAR TONOYAN**

*La Correction Des Fautes . . . . . 168*

**ՍԱԹԵՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ազդեցությունը մտավոր հետամնացություն ունեցող դպրոցականների մտածողության զարգացման վրա . . . . . 173

**ԱՆԱՀԻՏ ԴԱՐՄԱՋՅԱՆ**

Մաթեմատիկայի ուսուցումը հանրակրթական դպրոցում նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ . . . . . 180

**ՄԱՄԻԿՈՆ ՀԱԿՈՔՅԱՆ**

Hot potatoes 6-ի կիրառումը համակարգչային թեստավորման ավտոմատացված համակարգի մշակման գործընթացում . . . . . 186

**ԼԻԶԱ ՀԱՐՈՅԱՆ, ԼԻԼԻԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, ՆԱԶԵԼԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

Նոր սերնդի դեռահասի բարոյաաշխատանքային դաստիարակությունը . . . . . 191

**ԼԻԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

«Հայոց Մեծ եղեռնը» թեմայի դասավանդումը միջին մասնագիտական կրթական ծրագրերում . . . . . 198

**ԳՈՀԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԱԳՅԱՆ**

Միականալ մասսայական սպասարկման համակարգի իմփրացիոն մոդելի ուսուցման մի քանի հարցեր . . . . . 204

**ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՍՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**

Տարրական դպրոցի ուսուցչի մանկավարժական վարպետության ձևավորման և ինքնազարգացման գործընթացը . . . . . 210

**ՏԱԹԵՎԻԿ ԵՆՈՔՅԱՆ**

Երկխոսությունը և մենախոսությունը կրտսեր դպրոցականի հաղորդակցական ունակության զարգացման գլխավոր միջոց . . . . . 215

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Ժողովրդական հեքիաթների դասավանդման մեթոդիկական բուհում . . . . . 219

**ՄԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ԱԴԻՐՆԵ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

*Հաղորդակցական մեթոդի կիրառումն  
իսպաներենի դասավանդման ժամանակ . . . . . 223*

**ՄԵԼՍԻԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման իմ փորձից . . . . . 227*

**ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Բազմիմաստ ածականների ուսուցման մեթոդիկան . . . . . 235*

**ՖԼՈՐԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Երաժշտական սրեղծագործություն սովորելու գործընթացի փուլերը . . . . . 241*

**ԼԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Իսպանի կիրառումն օտար լեզուների դասավանդման մեջ . . . . . 246*

**ЛАРИСА ФАРАМАЗЯН**

*Обучение студентов неязыковых факультетов русскому языку  
с использованием кинофильмов с целью общения  
в профессиональной сфере . . . . . 250*

**БЕЛЛА ХОДЖУМЯН, НАРИНЕ ОРМАНЯН**

*Социально–психологический аспект использования речевой ситуации при  
обучении студентов неязыковых факультетов языку специальности . . . . . 254*

**MARIANA EPREMIÁN**

*Las Peculiaridades Del Aprendizaje Por Medio De Semipresencialidad . . . . . 258*

**ZARUHÍ AZIZBEKIÁN**

*El Papel De La Pizarra Digital En La Enseñanza De Las Lenguas Extranjeras . . . . . 265*

**ԱՆԱԻԴԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

*Թարգմանական վարժությունների դերը թարգմանության գործընթացում . . . . . 272*

**ԱՆԱՀԻՏ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

*Աշխարհագրական նոր նյութի հաղորդման ինտեգրված դասի մեթոդիկա (հրաբուխները և երկրաշարժերը որպես բնահասարակագիտական երևույթ) . . . . . 277*

**NAÏRA MELKONYAN**

*Le Rôle De La Grammaire Dans L'enseignement Du Français . . . . . 281*

**ԱՆՈՒՇ ՖԻԴՈՅԱՆ**

*«Կրկնակի գրառումների օրագիր» մեթոդը գրականության դասերին . . . . . 286*

**MAGDA ISRAELIÁN**

*El Aprendizaje De Las Lenguas Extranjeras A Través De Las Canciones . . . . . 292*

**ԼԻԼՅԱ ԴԱԴԱՍՅԱՆ**

*Պարբերական և ոչ պարբերական ֆունկցիաներ . . . . . 298*

**ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Վահան Տերյանի պատմահայրենասիրական պոեզիայի ուսուցումը բուհում. . . . . 301*

*(Դասի նմուշօրինակ) . . . . . 301*

**ARMINE ABRAHAMYAN**

*Personalized Talks.tasks: How Might They Increase Child's Self-Confidence For Acting In A Performance . . . . . 308*

**ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Բլից-խաղերը որպես ակտիվ ուսուցման ձև փարրական դպրոցում. . . . . 314*

**ԴՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

*Անձի ձևավորման վրա ազդող գործոնների մեկնաբանությունը Վազգեն Առաջին կաթողիկոս-մանկավարժի հայացքներում . . . . . 319*

**ԱՐՊԱՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ, ԳՐԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*Կրթության համակարգում իրականացվող բարեփոխումները  
Լեոնային Ղարաբաղի հայկական դպրոցներում (1930–1940 թթ.) . . . . . 323*

**ՖԼՈՐԱ ԳԻՆՈՍՅԱՆ**

*Ջենմ Գյոզալյան՝ Մանկավարժ և անհատականություն . . . . . 333*

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

**ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

*Բարձրագույն կրթության կառավարման մարտահրավերները . . . . . 338*

**ՇՏԿՈՂԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**

**ՍՈՒՍԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

*Ձայնային կողմնորոշիչների դերը տեսողության  
խանգարումներ ունեցող երեխաների փարածական  
կողմնորոշման զարգացման շարժախաղերում . . . . . 344*

**ԱՐԱՔՍՅԱ ՍՎԱՋՅԱՆ, ԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

*Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների կրթության  
կազմակերպումը ներառական ուսուցման պայմաններում . . . . . 349*

**ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

*Ներառական կրթության արդյունավետության բարձրացումը  
մայրենիի դասերի միջոցով . . . . . 353*

**ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԱԼԵՈԼՈԳԻԱ**

**ՏԱԹԵՎԻԿ ՆԱՍԻԼՅԱՆ**

*Պատասխանատու վարքագծի և առողջ  
ապրելակերպի ձևավորման մոդելները  
որպես ՄԻԱՎ–ի կանխարգելման միջոց . . . . . 358*

*ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ . . . . . 363*





ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԻՏՔ



ПЕДАГОГИЧЕСКАЯ МЫСЛЬ



PEDAGOGICAL THOUGHT

2016

1–2

Հրատարակչության տնօրեն՝	Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝	Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝	Աշոտ Բագրատյանի
Համակարգող և սրբագրիչ՝	Նարինե Ղուկասյան

Տպագրությունը՝ օֆսերթ: Չափսը՝ 70×100 1/16

Թուղթը՝ օֆսերթ: Ծավալը՝ 23,5 տպ. մամուլ

Տպաքանակը՝ 300



ԶԱՆԳԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2

Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am

Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am

Ֆեյսբուքյան կայքէջ՝ <https://www.facebook.com/zangak>